ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ուսումնական կենտրոն

Ուսումնական ծրագիր

Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման
«Անվտանգություն և առաջին օգնություն » **առարկայի** դասընթացի

Քննարկվել և **հաստատվել է**
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի <<**Հատուկ**
պատրաստականություն>>կրթաճյուղի
01.06.2018թ-ի նիստում
Արձանագրություն թիվ 4

ք.Երևան
2018թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության «Անվտանգության և առաջին օգնություն» առարկայի եռամսյա դասընթացի

h/h	Թեմաների անվանումը	Այդ թվում			
		Ընդա-մենը	Դասախո-սություն	Գործ. պարապ-մունք	Սեմինար
1	2	3	4	5	6
1.	Ոստիկանի պարտականություններն առաջին օգնության անհրաժեշտության դեպքում ,իրավիճակի գնահատում,տեղանքի զննում ,անձնական անվտանգության ապահովում:	4	2	-	2
2.	Տուժողի վիճակի գնահատում,կլինիկական մահ,կենդանության և մահվան նշանները: Վերակենդանացում,արհեստական շնչառություն ,սրտի մերսում:	4	2	2	-
3.	Արյունահոսություն,տեսակները,դադարեցման ձևերը:Փափուկ հյուսվածքների վնասվածքներ:	4	2	2	-
4.	Այրվածքներ,արևահարություն,ջերմային հարված,ցրտահարություն,հիպոթեմիա:	4	2	2	-
5.	Թունավորումներ ալկոհոլից,թմրանյութերից, քնաբեր միջոցներից.օձերի,միջատների խայթոցներից:Կոտրվածքներ,հոդախախտեր:	4	2	-	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	**20**	**10**	**6**	**4**

Կազմեց՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստ.միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի մարտական ֆիզիկական և հատուկ պատրաստականությա ն ամբիոնի պայմանագրային դասախոս,բժշկական ծառայության գնդապետ

Ս .Հ Մուրադյան

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի նիստում արձանագրություն թիվ 4 01.06.2018թ

Գ.Ա Ձաղացպանյան

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան առարկայի ուսումնասիրման համար հատկացված է 20 ժամ, որից՝

- դասախոսություն- 10ժամ,
- գործնական - 6 ժամ,
- Սեմինար - 4 ժամ

2. «Անվտանգություն և առաջին օգնություն» առարկայի ուսուցման նպատակները և խնդիրները

Առարկայի հիմնական նպատակն է սովորողների մոտ ձևավորել արտակարգ պատահարների ժամանակ ծառայողական անվտանգության կանոնների պահպանման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:Առարկայի դասավանդման ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները՝

1. Տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ուսուցանել արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, իր և շրջապատի, ինչպես նաև տուժողի անվտանգությունը պահպանելու ուղղությամբ:
2. Ծանոթացնել ոստիկանի կողմից առաջին օգնության ցուցաբերման անհրաժեշտության իրավական ակտերին:
3. Բացատրել առաջին օգնության ցուցաբերման նպատակները:
4. Ուսուցանել տարաբնույթ վնասվածքների և հիվանդագին վիճակների ախտորոշման նշանները և նրանց բարդության որոշման չափորոշիչները
5. Արմատավորել տարաբնույթ վնասվածքների և հիվանդագին վիճակների դեպքում անհրաժեշ հմտություններ և կարողություններ:

3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները.

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. ճիշտ գնահատել իրավիճակը
2. ճիշտ ներկայացնել արտակարգ իրավիճակներում ոստիկանության ծառայողի գործունեությունը կարգավորող իրավական ակտերը
3. ապահովել իր, տուժածի և շրջապատի անվտանգությունը
4. գնահատել տուժողի վիճակը
5. ճանաչել հանկարծահաս հիվանդագին վիճակը, որոշել վնասվածքը և նրա բարդության աստիճանը
6. Ցուցաբերել առաջին օգնություն տարաբնույթ վնասվածքների և հանկարծահաս հիվանդագին վիճակների դեպքում, այնպիսի չափով, որպեսզի կարողանա պահպանի տուժողի կյանքը, կանխի տուժողի վիճակի վաթարացումը մինչև բժշկական ծառայության ժամանելը:

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ դասընթացների հետ

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված «Արտակարգ իրավիճակներ և քաղ. պաշտպանության հիմնահարցեր » առարկայի հետ:

5. Առարկայի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների և սեմինարների տեսքով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով: Դասավանդման ընթացքում օգտագործվում են տեսանյութեր և դիդակտիկ պաստառներ: Գործնական պարապմունքների ընթացքում պրակտիկ վարժությունների, իրավիճակային առաջադրանքների միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք տեսական գիտելիքների միջոցով ամրապնդվելով, դառնում են արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

Սովորողներին հաղորդված գիտելիքների և հմտությունների իմացության ամրապնդումը ապահովելու համար ուսուցման արդյունքում անց են կացվում համալիր գործնական պարապմունքներ, որոնց ընթացքը վերահսկվում է դասախոսների միացյալ ուժերով:

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

<u>Թեմա 1</u> Ոստիկանի պարտականություններն առաջին օգության անհրաժեշտության դեպքում, իրավիճակի գնահատում, տեղանքի զննում , անձնական անվտանգության ապահովում :

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. Իրավիճակի գնահատում, տեղանքի զննում
2. Տարաբնույթ պատահարների դեպքում անձնական անվտանգության ապահովում
3. Առաջին օգնության նպատակները
4. Ոստիկանի կողմից առաջին օգնության ցուցաբերումը կանոնակարգող իրավական ակտերի մեկնաբանում

<u>Թեմա 2</u> Տուժողի վիճակի գնահատում ,կլինիկական մահ, կենդանության և մահվան նշանները :Վերակենդանացում,արհեստական շնչառություն,սրտի մերսում:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. Տուժողի վիճակի գնահատում
2. Կլինիկական մահ,կենդանության և մահվան նշանները
3. Ոստիկանի գործողությունները տուժողի մոտ,կլինիկական մահ կենդանի վիճակ կամ կենսաբանական մահվան վիճակ արձանագրվելու դեպքում
4. Արհեստական շնչառության իրականացման անհրաժեշտության հնարքները:
5. Վերակենդանացման և արհեստական շնչառության անհրաժեշտության իրականացման մեխանիզմը ,ձևերը և նորմերը:
6. Արհեստական շնչառության և սրտի մերսման իրականացումը ծծկեր երեխաների մոտ

<u>Թեմա 3</u> Արյունահոսություններ, տեսակները, դադարեցման ձևերը: Փափուկ հյուսվածքների վնասվածքներ

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. Զարկերակային,մազանոթային,երակային արյունահոսության տարբերակիչ նշանները
2. Նշանները արտաքին արյունահոսության դեպքում
3. Ներքին արյունահոսության նախանշանները
4. Արյունահոսության դադարեցման ձևերը
5. Փափուկ հյուսվածքների փակ վնասվածքների առաջին օգնությունը
6. Փափուկ հյուսվածքների վերքերի առաջին օգնությունը
7. Վարակի ներթափանցման նվազեցում

8. Օտար մարմինը վերքի մեջ,անդամահատված վերքեր,հյուսվածքների երկարատև ճզման համախտանիշ,վարակված վերքեր

<u>Թեմա 4</u> Այրվածքներ,արևահարություն,ջերմային հարված, ցրտահարություն, հիպոթերմիա : Հանկարծահաս հիվանդագին վիճակներ:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. Արևային և ջերմային հարվածների նշանները առաջին օգնության դեպքում
2. Ցրտահարություն,հիպոթերմիա,նշանները առաջին օգնության դեպքում
3. Այրվածքներ /ջերմային,քիմիական,էլեկտրական,ճառագայթային/, նշանները, բարդության աստիճանի որոշումը և առաջին օգնությունը

4.Նախանշանները,ախտորոշումը և առաջին օգնությունը

- ուշագնածության,
- գլխուղեղի կաթվածի
- սրտամկանի ինֆարկտի և կրծքահեղձուկի նոպայի
- տենդային ցնցումների
- էպիլեպսիայի դեպքերում

<u>Թեմա 5</u> Թունավորումներ ալկոհոլից,թմրանյութերից,քնաբեր միջոցներից, օձերի, միջատների խայթոցներից: Կոտրվածքներ, հոդախախտեր:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. Նշանների ախտորոշումը և առաջին օգնությունը՝
— ալկոհոլային
— թմրամոլային
— քնաբեր միջոցներից թունավորվելու դեպքերում
2. ՀՀ-ի թունավոր օձերի արտաքին նշանները, բնակության տարածաշրջանները
3. Նշանները և առաջին օգնությունը՝ օձերի,միջատների խայթոցի դեպքում
4. Նշանները և օգնությունը բաց և փակ կոտրվածքների դեպքում
5. Նշանները և օգնությունը կողոսկրի կոտրվածքի դեպքում
6. Առաջին օգնությունը գանգոսկրի և ողնաշարի կոտրվածքի դեպքում
7. Նշանները և առաջին օգնությունը հոդախախտի դեպքում

Գրականության ցանկ

1. Ա. Սարգսյան «Առաջին օգնության հիմունքներ» ուսաումնական ձեռնարկ Ք. Երևան 1999թ.
2. Ա. Պողոսյան «Առաջին օգնության տարրեր» ուս. ձեռնարկ , Հայկական «Կարմիր խաչ»-ի ընկերության հատ.
3. Ա. Պետրոսյան «Առաջին օգնություն / հրատապ հարցեր/» ուսումնական ձեռնարկ , «Զանգակ -97» 2002թ.